ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱԼԵՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղալեչյան.

Ի պատասխան Ձեր 08.02.2019թ. հ.01/100 գրության՝ տեղեկացվում է, որ Հաղթանակ թաղամասը նախկինում սպասարկող ավտոբուսային հ.56 երթուղու շահագործման ցածր արդյունավետության պատճառով երթուղին սպասարկող կազմակերպությունը հրաժարվել է երթուղու սպասարկումից և Երևանի քաղաքապետի 28.12.2018թ. հ.3818-Ա որոշմամբ դադարեցվել է դրա աշխատանքը:

Ավտոբուսային հ.56 երթուղու աշխատանքի դադարեցումից հետո, քննարկվել և փորձարկվել են մի քանի տարբերակներ՝ թաղամասի տրանսպորտային սպասարկումը կազմակերպելու համար և, ելնելով առկա ուղևորահոսքից, որպես հնարավոր տարբերակ, նպատակահարմար է համարվել թաղամասն սպասարկող միկրոավտոբուսային հ.23 երթուղու ուղեգիծը երկարացնելու մինչև Կաթի կոմբինատ և ավելացնելու շարժակազմի քանակը:

Տեղեկացվում է նաև, որ վերջին օրերին պարբերաբար ուսումնասիրվել է երթուղու սպասարկման վիճակը: Ուսումնասիրությունից պարզվել է, որ երթուղին առավոտյան ժամերին սպասարկվել է 16 միավոր շարժակազմով՝ միջինը 7-8 րոպե շարժման միջակայքերով, իսկ երեկոյան ժամը 18^{00}-ից 20^{00}-ի սահմաններում, 10 միավոր շարժակազմով՝ միջինը 11-12 րոպե շարժման միջակայքերով: Բացի այդ, պարզվել է նաև, որ օրվա ծանրաբեռնված ժամերին փաստացի ուղևորահոսքը մեծ է և, ելնելով Հաղթանակ թաղամասի բնակիչների տրանսպորտային սպասարկման վիճակի բարելավման անհրաժեշտությունից, հանձնարարվել է միկրոավտոբուսային հ.23 երթուղին սպասարկող ընկերությանը՝ հնարավորինս ավելացնելու ծանրաբեռնված ժամերին գիծ դուրս բերվող շարժակազմի քանակը և կանոնավորել երթուղու աշխատանքը, մասնավորապես՝ երեկոյան ժամերին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ միկրոավտոբուսային հ.23 երթուղու աշխատանքը վերցված է հսկողության տակ և առաջին իսկ հնարավորության դեպքում կքննարկվի Հաղթանակ թաղամասում ևս մեկ երթուղու շահագործման հարցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ